

առանձին արտօնութիւններ տուաւ, մասնաւորաբար Բայազիտ-Ալաշկերտի փաշայութեան, որ տեսակ մը պատուար կը հանդիսանար պարսկական սահմանին վրայ:

Ընդհանրապէս Բոսթանի Էմիրը եւ Մշոյ Ալատին բէյի տունը համերաշխ էին եւ դաշնակից, ու կը դործէին Հէքեարիի Էմիրներուն դէմ: Այս պարագան անկարելի կը դարձնէր քրդական հաւաքական կազմակերպութեան դործը: Որովհետեւ, եթէ Մուշը, էրզրումն ու Բայազիտը մէկ կողմ թողունք, որպէս քրդական կղզիներ, որոնք քրդական անկախութեան մը որորանը չէին կրնար ըլլալ, նկատի առնելով հայերու, քիւրդերու եւ թուրքերու փոխյարաբերութիւններն ու ազգային անջատ պահանջները, անդին, Վանէն եւ Բիթլիսէն հարաւ, Բոսթանի եւ Հէքեարիի Էմիրութիւնները միասին առած՝ քրտական ազգ մը եւ պետութիւն մը կազմելու յաւակնութիւնը կրնային սնուցանել: Եւ շատ բնական է որ քրդական լուրջ քաղաքական շարժման մը կեդրոնը բուն քիւրդիստանի մէջն ըլլար:

Բէյերլիսան բէյի միջավայրը Մեծ Չապի հովիտն էր, ուր, թէ՛ ըստ իրականութեան, թէ՛ ըստ պատմական տուեալներու, եւ թէ՛ ըստ եւրոպացի իրազեկ գրողներու քիւրդ ազգը ամբողջութիւն մը կը կազմէր:

Երբ աչք մը պտտցնենք քարտէսի վրայ, ու հետեւինք Մեծ Չապի հոսանքին, որ կը սկսի Կոթուրի բարձունքներէն, Սարմաստին մօտիկ պարսկական սահմանէն, ու կ'անցնի Վանի նահանգի պարսկական սահմանի ամբողջ երկայնքով՝ կը մտնէ Հէքեարի, կ'անցնի ձուլամերկի առջեւէն եւ Մուսուլի տակ կը միանայ Տիգրիսին, ու միւս կողմէ՝ հետեւինք արեւելեան Տիգրիսի լեռնային ճիւղերուն, որոնք կը սկսին Շաստախի եւ Մոկսի բարձունքներէն, թեքուելով դէպի արեւելք՝ կ'անցնին Սղերդի արեւմուտքէն ու 25 քիլոմետր հարաւ, Թիլ աւանին մօտ կը միանան արեւմտեան մեծ Տիգրիսին, ապա, արմուկ մը կազմելով միացեալ Տիգրիսը կը դառնայ դէպի արեւելք, ու Մուսուլի տակ իր մէջ կ'առնէ Մեծ Չապը, — դուք կ'ունենաք ամփոփուած բուն Քիւրդիստանը, գրեթէ միապաղաղ քիւրդերով, քիւրդ լեզուով,

եւ անցեալի երկու Էմիրութիւններով (Բոսթան եւ Հէքեարի):

Այս սեղմ սահմանագծումն ըրի, պարզապէս աւելի շեշտելու համար քաղաքական շարժման մը կարեւորութիւնը, ո՛ր կը բխէր քիւրդ ազգի կուրծքէն, եւ որ հող ու հնարաւորութիւն ունէր արմատ ձգելու եւ ամբանալու:

Այն եւրոպացի գիտնականները, որոնք զբաղուած ենք քիւրդերով եւ Քիւրդիստանով, գրեթէ բոլորն ալ կարեւոր ընդդոմ մը ըրած են վերը սահմանագծուած միջավայրին, որպէս քիւրդերու բուն հայրենիքի: Աւելորդ չէ այդ բազմաթիւ կարծիքներէն երկուքը հոս արձանագրել:

Էլիզէ Ռըքլիւ, իր “Nouvelle Geographie Universelle”-ի մէջ կը գրէ. —

«Այն լեռնազաւտերը, ուր քիւրդերը խմբուած են հոծ ցեղերով, մասնաւորաբար Մեծ Չապի աւազանը, անոնք կը կազմեն ազգութիւն մը, ե՛ւ բաւական ուժեղ, այն աստիճանի, որ թուրքերու եւ պարսիկներու դէմ ազատ պետութիւն մը կազմելու փառասիրութիւնն ունէին: Այն խոռվութիւնները, որոնք տեղի ունեցան այս վերջին դարուն, եւ մասնաւորապէս ռուսական վերջին արշաւանքէն սկսած, անոնց մեծ մասը, իսկապէս, նպատակ ունէին քաղաքական ազատութիւն ձեռք բերելու»: (Էջ 342):

Էլիզէ Ռըքլիւի յար ու նման կ'արտայայտուի Mueller Simonis իր L'Armenie, le Kurdistan et la Mesopotamie” գրքին մէջ (տպուած Փարիզ, 1892-ին). միայն անոր եզրակացութիւնը դրական չէ քիւրդերու ազգութիւն մը կազմելու դադափարի տեսակէտէն: Ահա այդ հատուածը. —

«Այն հովիտներու մէջ, ուր քիւրդերը կեդրոնացած են խիտ ցեղախումբերով, անոնք կը կազմեն ազգութիւն մը բաւականին ուժեղ, պետութիւն մը կազմելու յաւակնութիւնն ունենալու աստիճան: Բայց անոնց ցեղային բաժանումը, անոնց արկածախնդիր բնաւորութիւնը եւ իրենց երկրի արտաքին պատկերացումն իսկ կ'ընդդիմանան իրական քիւրդ ազգի մը կազմութեան»: (Էջ 373):

Ահա այս ազգային միջավայրի մէջն էր որ մեծցաւ Էմիր Բէյերլիսան բէյը, ու կրցաւ ըմբռնել միութեան կարեւորութիւնն այս երկ-